լաւ է մեզ մեռանիլ և 'ի չանել 'ի խորս գերեզ-
մանի քան թէ կալ և մնալ անօրէնութեամբ կե-
նօք 'ի նախատանս, զի անօրէնութեամբ և ար-
տաքոյ կանոնի կեանք ում որ իցէ տուժելի է
քան թէ պատիժն խորին դժոխոց, վասն զի ոչ
զինքն և ոչ ընտանիս և ոչ բարեկամս և ոչ դրա-
ցիս և այլն ոչ կարէ խաղաղութեամբ մնալ և
ամենայն ցայլ և ցերեկ և 'ի միջի ամենայն գործոց
բարեաց և չարեաց կայ 'ի ներքոյ վտարանդի
ոչ թէ միայն փոքրն և կրտսերն և աղքատն և
նուազն, այլ նաև շատն մեծն հարուստն և կարե-
ւորն համախոհ վտարանդի կենօք կորուսանեն
ժամանակս կենաց իւրեանց մեռանելով իբրև
անասուն և անբան, և որպէս անօրէնութեամբ
վարիւք 'ի այսմ աշխարհիս կորնչին, նոյն ինքն
վտարանդի շարժմամբ կացցէ 'ի հանդերձելումն
'ի տանջանս, զի ոչ ումեքէ լինիցի լսել 'ի բո-
ղոքմունս նոցայ 'ի հանդերձելումն, թէպէտ ընա-
կան իրաւամբ գոցին տեղի բողոքելոյ ասելով՝
այսինքն իշխանք աշխարհին մերոյ որում ես
կացի 'ի մարմնի ոչ ետուն սահման վարելոյ
զկեանս մեր և մեք ոչ ծանեաք թէ որպիսեաւ
զսպել մեզ հարկաւոր էր կեանս մեր, վասն որոյ
ոչ գոյ մեղք մեզ 'ի անօրէնութենէ կենաց մե-
րոց և այլն, այլ մեք ճանաչելով արդարութիւն
Տեառն արարչին մերոյ և անաչառ դատողու-
թիւնն նորայ ոչ երկրայիմք զի առանց մխիթա-